

ՄԵԴԻԱԼԱԲ 2015–16

«Ուտոպիանա.ամ» մշակութային–սրտեղծագործական ՀԿ

08.09.2015–08.04.2016

Մեդիալաբը «Ուտոպիանա» կազմակերպության կիսամյա կրթական նախագիծն է, որն իրականացվում է 2007 թվականից և արդեն ունի բազմաթիվ շրջանավարտներ: Մեդիալաբն անվճար արվեստային կրթություն է տրամադրում 15–25 տարեկան արվեստի ուսանողներին և արվեստով զբաղվողներին:

Նպատակը. Նախագիծը միտված է ընդլայնել ուսանողների տեխնիկական և տեսական գիտելիքները՝ ծանոթացնել արվեստի նոր գործիքներին և ուսանողների մոտ ձևավորել քննադատական կեցվածք:

Կառուցվածքը. Ծրագիրը բաղկացած է հերթագայող դասընթացներից, որոնք վարում են ոլորտի հմուտ և բանիմաց մասնագետները: Դասընթացների ժամանակ մասնակիցները կզարգացնեն և կիրականացնեն անհատական կամ խմբային նախագծեր:

Նախագծի ընթացքում մասնակիցները կուսանեն.

1. Ժամանակակից արվեստի պատմություն
2. լուսանկարչության պատմություն և լուսանկարի ընթերցում
3. լուսանկարչության տեխնիկական հարցեր և մշակում
4. ստեղծագործական գրություն
5. օպերատորական հմտություններ
6. ձայնային արվեստ
7. անիմացիայի ներածություն
8. լուսանկարի քիմիական տպագրության եղանակներ
9. մոնտաժի տեսություն ու պատմություն
10. գրաֆիկական ձևավորում

Հաճախականությունը. Նախատեսվում է շաբաթական երկու դաս՝ 1,5–2 ժամ տևողությամբ: Կլինեն նաև լրացուցիչ հանդիպումներ (օր.՝ բանախոսություններ, քննարկումներ, այցեր և այլն), որոնց մասնակցելը կամավոր սկզբունքով է:



Մեդիալաբի ուսանողները ձայնային արվեստի վարպետության դասի ժամանակ:



Մեդիալաբի ուսանողները բացօթյա նկարահանման ժամանակ՝ Աշոտ Բոյաջյանի օպերատորական դասընթացի շրջանակում:

Ուսանողները հնարավորություն կունենան.

- ծանոթանալ արվեստի տեղային և համաշխարհային համատեքստին
- հանդիպել Երևանում գործող և դրսեկ արվեստագետների հետ
- ներգրավվել «Ուտոպիանայի» կամ այլ կազմակերպությունների ընթացիկ նախագծերում
- ուսանել լուսանկարի մշակման, մոնտաժային և գրաֆիկական համակարգչային ծրագրեր
- զարգացնել սեփական նախագծերը
- օգտվել «Ուտոպիանայի» գրադարանից և տեխնիկական լաբորատորիաներից (ուսանողներին կտրամադրվի գրականություն, տեսանյութեր, անհրաժեշտ գործիքներ)

Ովքեր կարող են դիմել. Ծրագրին կարող են դիմել 15-25 տարեկան նկարիչներ, լուսանկարիչներ և այլ արվեստի բնագավառների ուսանողներ կամ՝ արվեստով զբաղվող անձիք:

Ինչպես դիմել. Ծրագրին դիմելու համար հարկավոր է լրացնել հայտադիմումը հետևյալ հղումով՝ <http://goo.gl/forms/CpFHStiu1B>: Հետագայում ընտրված հայտադիմորդները կիրավիրվեն հարցազրույցի:

«Ուտոպիանան» մշակութային-սրտեղծագործական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որի նպատակն է խրախուսել և նպաստել հայաստանյան արվեստի և մշակույթի դաշտում սրտեղծագործական, քննադատական նոր մտքի զարգացմանը:

Գիտակցելով, որ ժամանակակից արվեստը հնարավոր չէ պատկերացնել արդի միջազգային և տեղային գործընթացներից անջատ՝ «Ուտոպիանան» կարևորում է արվեստի դերը հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրների վերհանման, բարձրաձայնման և լուծումներ առաջարկելու գործում:

Այս նպատակներից ելնելով՝ «Ուտոպիանան» իր փասնաբանական գործունեության արդյունքում ձևավորել է մի քանի հարթակներ, որոնք ակտիվ մասնակցային գործընթացների, բանավեճի ու կրթության, սոցիալ-մշակութային ու քաղաքացիական երկխոսության յուրօրինակ ակտիվ խթաններ են: Դրանցից են՝ «Տրանսֆորմեր» մշակույթ անիվների վրա» մշակութային բազմաֆունկցիոնալ շարժական հարթակը (transformer.utopiana.am), «ACTV» (www.actv.am) օնլայն հեռուստատեսային նախագիծը և «Մեդիալաբ» կրթական ծրագիրը (<http://new.utopiana.am/hy/medialab/>):



Մեդիալաբի ուսանողները օպերատորական դասերի շրջանակում հյուրընկալվել են «Բուն TV»-ում:



«Լույս գողացողը»
Շուշան Խաչատրյան
Ֆոտոգրամ, 12x18 սմ, 2015 թ.

ՀԱՃԱՆՍ ՏՐՎՈՂ ՀԱՐՅԵՐ

— **Շաբաթվա իր օրերին են լինելու դասերը:**

— Դասերի օրը և ժամը մասնակիցները կհամաձայնեցնեն դասընթացավարի հետ: Այսինքն, կախված դասընթացից և դասընթացավարից, դասերի օրերը տարբեր կլինեն:

— **Մասնակցությունն անվճար է:**

— Այո, մասնակցությունը լիովին անվճար է:

— **Պարտադիր է ներկա լինել բոլոր դասընթացներին:**

— Մասնակիցը պարտավոր է ներկա լինել բոլոր դասընթացներին, բացալայության մասին նախապես տեղեկացնել: Պարբերական անհարգելի բացակայությունների կամ ուշացումների դեպքում մասնակիցը կարող է հեռացվել:

— **Ինչ չափանիշներով են ընտրվում մասնակիցները:**

— Դիմորդների մեծ թվի պատճառով ընտրվում են առավել շահագրգիռ երիտասարդները, ովքեր կարիք ունեն Մեդիալաբի տրամադրած կրթության իրենց գործունեության համար:

— **Որտեղ են անցկացվում դասերը:**

— Դասերն անցկացվում են «Ուտոպիանա.ամ» կազմակերպության գրասենյակում՝ Երևան, Չարենց 4, բն. 37, հասցեով: Բացառությամբ տարատեսակ ուսումնական այցերի:

— **Ինչ է ակնկալվում մասնակիցներից:**

— Մասնակիցներից ակնկալվում է ակտիվություն բոլոր դասերի ընթացքում, աշխատանքային հանձնարարությունների և առաջադրանքների լիարժեք կատարում և ընթերցելու պատրաստակամություն:

— **Մասնակիցներին վկայական փրվում է:**

— Ծրագրի ավարտին մասնակիցները կստանան մասնակցության վկայական՝ «Ուտոպիանա.ամ» կազմակերպության կողմից:

Հարցերի և փեղեկությունների համար կարող ես զանգահարել հեղինակ համարներով՝ 055 638 550, 091 552 861, գրել medialab@utopiana.am հասցեին կամ «Ուտոպիանայի» ֆեյսբուքյան էջին՝ www.facebook.com/utopiana.am.



«Անվերնագիր»
Հոլի Արմենակյան
սկանագրամ, 2013 թ.



Մեդիալաբ 2014–15 փարվա
ուսանողներն ավարտական
երեկոյի ժամանակ